«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈԱԱԿ

Հավելված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի *2025թ.* մայիսի *5*-ի թիվ *1*-Լ որոշման

2024

Բովանդակություն

3
Նախաբան
4
ՈԱԱԿ 2024թ. գործունեության արդյունքները
9
Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում
26
Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում
29
Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն
41
Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում
47
Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում
60
Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները
65
Զարգացման մարտահրավերներ և զարգացման առաջիկա ուղղություններ

Շարունակելով խթանել միջազգայնացումը և ՀՀ-ում շնորհվող որակավորումների ճանաչելիությունը. ՈԱԱԿ գործունեության արդյունքների 2024թ. ամփոփում

Մեր առաքելությունն է՝ խթանել որակի շարունակական բարելավումը մասնագիտական կրթական համակարգում՝ նպաստելով ինքնավարությանը և հաշվետվողականությանը:

Մեր արժեքներն են.

- Հավասարությունը,
- Նորարարությունը,
- Վստահությունը,
- Հաշվետվողականությունը,
- Փոխգործակցությունը:

ՈԱԱԿ 2024թ. գործունեության արդյունքները

Հավատարմագրումներ

4 ինստիտուցիոնալ հավատարմագրում բարձրագույն ուսումնական հաստատություններում.

- համատեղ հավատարմագրման որոշումների կայացում՝ Ֆրանսիայի հետազոտության և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհրդի (HCERES) հետ համատեղ իրականացված հավատարմագրման գործընթացի արդյունքում,
- Գերմանական AQAS գործակալության հետ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի համատեղ կրկնակի հավատարմագրման գործընթացի մեկնարկ:

22 ինստիտուցիոնալ հավատարմագրում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում.

- 20 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրում՝ պետական ֆինանսավորմամբ (2023թ.-ի համեմատությամբ՝ 15-ից հասնելով 20-ի), որոնցից 7-ը՝ երկրորդ շրջափուլով,
- 2 մասնավոր միջին մասնագիտական ուսումնական հաստատության հավատարմագրում՝ սեփական նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ:

Մշտադիտարկումներ

- 10 ինստիտուցիոնալ և ծրագրային մշտադիտարկման այց բարձրագույն ուսումնական հաստատություններ,
- 20 ինստիտուցիոնալ մշտադիտարկման այց ՄԿՈՒ հաստատություններ:

ՈԱԱԿ 2024թ. գործունեության արդյունքները

Փորձագիտական կարողությունների ձևավորում

Հավատարմագրումներին մասնակցել են.

- 52 տեղացի փորձագետներ,
- 5 միջազգային փորձագետներ,
- 18 ուսանող-փորձագետներ,
- 1 ուսանող-փորձագետ վերընդգրկվել է Ուսանողների եվրոպական ասոցիացիայի ուսանող փորձագետների բազայում և ներգրավվել միջազգային կառույցների կողմից կազմակերպվող արտաքին գնահատման գործընթացներում:



2024թ. հավատարմագրումների մասնակցած փորձագետների թիվը

Որակի մշակույթի զարգացում ՀՀ-ում

- 85 վերապատրաստված փորձագետներ, ներառյալ՝ դասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչներ, ամբիոնի վարիչներ,
- 50 վերապատրաստված ուսանողներ բուհերից և ՄԿՈՒ հաստատություններից:

ՈԱԱԿ 2024թ. գործունեության արդյունքները

Շահակիցների ներգրավվածություն

- **20** աշխատաժողով և վերապատրաստում Հայաստանում և արտերկրում՝ փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման նպատակով,

- Բուհերի ՄԿԾ բարելավման **4** աշխատաժողով՝ շուրջ **400** ներկայացուցիչների ներգրավմամբ (բուհերի ղեկավարներ, ՄԿԾ ղեկավարներ, դասավանդողներ, որակի ապահովման պատասխանատուներ),

- ՄԿՈ հաստատությունների ՄԿԾ-ների բարելավման **1** աշխատաժողով՝ շուրջ **100** ներկայացուցիչների ներգրավմամբ (քոլեջների ղեկավարներ, ՄԿԾ ղեկավարներ, դասավանդողներ, որակի ապահովման պատասխանատուներ),

- ՀՊՏՀ-ում **1** աշխատաժողով՝ AQAS գործակալության հետ համատեղ միջազգային համատեղ հավատարմագրման վերաբերյալ՝ **28** հավատարմագրված բուհերից շուրջ **60** ներկայացուցիչների մասնակցությամբ,

- ETF ֆորումի իրականացմամբ ՄԿՈ համակարգի գնահատում՝ **9** երկրներից **11** միջազգային փորձագետների և ՀՀ ՄԿՈ ոլորտի շուրջ **50** ներկայացուցիչների մասնակցությամբ,

- ՄԿՈ հաստատությունների ինքնավերլուծության իրականացման վերապատրաստումներ՝ **20** ՄԿՈ հաստատություններից **100** ներկայացուցիչների մասնակցությամբ:

Միջազգայնացում

ՈԱԱԿ-ն անդամակցում է.

- Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA),
- Որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին (INQAAHE),
- Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի որակի ապահովման գործակալությունների ցանցին (CEENQA):

Գրանցված է.

- Եվրոպական որակի ապահովման գրանցամատյանում (EQAR):

Կնքել է.

- փոխըմբռման և համագործակցության 2 հուշագիր համատեղ հավատարմագրումների իրականացման և փորձի փոխանակման նպատակով:

Ներգրավված է եղել.

- 5 Erasmus+ միջազգային ծրագրերում:

Ծրագրերի թեմաները ներառում են.

- կրթական ծրագրերում անգլերենով դասավանդվող մոդուլների ներդրում և դրանց որակի ապահովում,
- աշխատաշուկայի պահանջներից բխող միկրոորակավարումների մշակում,
- բարձրագույն կրթության ազգային KPI համակարգի մշակում՝ Հայաստանի ներառական, թվային և կանաչ կրթության անցումը խթանելու համար,
- փափուկ հմտությունների առցանց մոդուլների և զանգվածային բաց առցանց դասընթացների (MOOC) մշակում:

ՈԱԱԿ 2024թ. գործունեության արդյունքները

ՈԱԱԿ-ը՝ որպես փորձառու միջազգային կառույց, **ENQA** անդամների ֆորումի շրջանակներում ներկայացրել է «Արհեստական բանականության կիրառությունն ինստիտուցիոնալ հավատարմագրման ազդեցությունը բուհերում գնահատելու նպատակով» վերլուծության մեթոդաբանությունը և արդյունքները:

ՈԱԱԿ արտաքին գնահատման զեկույցները հրապարակվում են Որակի արտաքին ապահովման արդյունքների տվյալների բազայում (DEQAR)՝ ապահովելով հավատարմագրված ուսումնական հաստատությունների կողմից շնորհված որակավորումների ճանաչումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում:

ՈԱԱԿ-ը՝ ի դեմս տնօրենի 6 տարի է ներկայացված է Բարձրագույն կրթության որակի ապահվման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կառավարման խորհրդում:

ՈԱԱԿ աշխատակիցները ներգրավված են Բոլոնիայի հետամուտ խմբի (BFUG) Որակի ապահովում և Որակավորումների շնորհում թեմատիկ խմբերում: ՀՀ-ն դարձել է Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի համանախագահող երկիր՝ Ռումինիայի և Ֆրանսիայի հետ միասին:

ETF-ի հետ համագործակցությամբ և ՈԱԱԿ նախաձեռնությամբ ՀՀ-ն դարձել է ETF ՄԿՈ համակարգի հայտորոշման գործիքը փորձարկող առաջին երկրներից մեկը:

ETF-ի հետ ռազմավարական համագործակցության ամրապնդում և ՄԿՈՒ համակարգի զարգացման նոր փուլ:

ETF-ի հետ գործընկերությունը դարձել է ՄԿՈՒ համակարգի զարգացման հիմնասյուներից մեկը: Հայտորոշման գործիքի կիրառմամբ մեկնարկել է համակարգային գնահատման և բարելավման նոր փուլ, որը հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացնել ոլորտի կարիքները, վեր հանել զարգացումների ուղղությունները և ձևավորել տվյալահեն քաղաքականություն՝ միջազգային լավագույն փորձի համադրմամբ:

Հաջողության չափանիշ

ՈԱԱԿ-ի իրականացրած գործընթացները/ մատուցած ծառայությունները ճանաչվում են որպես վստահելի աղբյուր և հանդիսանում են ուղեցույց մասնագիտական կրթություն տրամադրողների համար որակի շարունակական մշակույթի խրախուսման և ամրապնդման համար:

Փաստեր

Բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրում

2024 թվականին ՈԱԱԿ-ը ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ է իրականացրել հետևյալ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝

- ՀՀ ՆԳՆ կրթահամալիր (2-րդ շրջափուլ),
- «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկ (1-ին շրջափուլ),
- Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան (3-րդ շրջափուլ),
- Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան (3-րդ շրջափուլ):

2024 թ.-ին մեկնարկել է Գերմանիայի AQAS գործակալության հետ համատեղ հավատարմագրման գործընթաց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի համար՝ ներառյալ ինստիտուցիոնալ մակարդակը և երեք կրթական ծրագրեր:

Նույն տարում ավարտին է հասել Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հավատարմագրումը, որը իրականացվել է Ֆրանսիայի հետազոտության և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհրդի (HCERES) հետ համատեղ:

Հաշվետու տարում միջազգային փորձագետներ են ներգրավվել հետևյալ հաստատություններից.

- Դուբնայի պետական համալսարան,
- Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարան,
- Վարշավայի համալսարան,
- Քյոլնի համալսարան,
- Ռումինիայի ազգային ռազմական համալսարան:

Տեղացի և ուսանող փորձագետներ ներգրավվել են ՀՀ մի շարք բուհերից և հաստատություններից, մասնավորապես.

- Երևանի պետական համալսարան,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
- Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան,
- Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ,
- Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն,
- Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան,
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
- Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան,
- ՀՀ Սահմանադրական դատարան,
- Հայաստանի եվրոպական համալսարան,
- «Եվրասիա» միջազգային համալսարան:

Որոշումների կայացում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կայացրել է հետևյալ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները.

- **Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 տարի ժամկետով, **6**
- **Ավանդական բժշկության համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**
- **«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, **4**
- **Հայաստանում Ֆրանսիական համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով: **4**

Որոշումների կայացման քաղաքականության վերանայում և հավատարմագրման նոր հանձնաժողով

Վերլուծելով հավատարմագրման նախորդ երկու շրջափուլների արդյունքները՝ ակնհայտ է դարձել, որ գործող որոշումների կայացման մեխանիզմը՝ որպես կայունացման գործիք, իր դերակատարումն ավարտել է: Բուհերը, որպես կանոն, արդեն բավարարում են բազային չափանիշները, իսկ համակարգը կանգնած է նոր մարտահրավերի առաջ՝ ինչպես խթանել բուհերի խորքային բարելավումը՝ կրթական ծրագրերի արդիականացման, ռեսուրսների կայուն կառավարման և տվյալահենք որոշումների կայացման ուղղությամբ:

2024 թվականին ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհուրդը հաստատել է Հավատարմագրման հանձնաժողովի նոր կազմը: Հանձնաժողովն իր առաջնային օրակարգում ներառել է ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումների կայացման քաղաքականության վերանայումը պատասխանելով հետևյալ մարտահրավերին.

- ապահովելով, որ հավատարմագրումը շարունակի մնալ զարգացման գործող խթան,
- մղելով հաստատություններին՝ նոր փուլ մուտք գործելու՝ հիմնված ռազմավարական արդյունավետ կառավարման, ծրագրարի բարելավման ուղղությամբ պատասխանատվության մեծացման և ինստիտուցիոնալ կայունության վրա,
- ներդնելով որոշումների նոր շրջանակ, որն արտացոլում է հաստատության իրական կարողությունները և բարելավման ներուժը:

Այս փոփոխությունը համակարգային նշանակություն ունի նաև պետական մակարդակում, քանի որ այն խթանում է բուհերի ավելի պատասխանատու դիրքավորում ազգային նպատակների համատեքստում՝ ներառյալ մարդկային կապիտալի որակական զարգացումը, բարձրագույն կրթության միջազգայնացումը և արդյունավետ ռեսուրսների կառավարումը:

Թարմացումներ Հավատարմագրման պետական գրանցամատյանում

Կարևորելով գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը՝ հաստատությունների հավատարմագրման մասին որոշումները, հավատարմագրման վկայականները և մյուս վերաբերելի փաստաթղթերը հայերենով և անգլերենով հասանելի են Հավատարմագրման պետական գրանցամատյանում:

Հավատարմագրման պետական գրանցամատյանը կապակցված է Եվրոպական որակի արտաքին ապահովման արդյունքների շտեմարանին (DEQAR). պետական գրանցամատյանում հավատարմագրման արդյունքների վերաբերյալ կատարված գրառումները՝ համաժամանակյա կերպով գրանցվում են DEQAR-ում՝ ապահովելով ՈԱԱԿ փորձագիտական զեկույցների և Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների հրապարակայնությունը նաև միջազգային մակարդակում:

Հաշվետու տարվա ընթացքում DEQAR-ում ներբեռնվել է 6 բուհի արտաքին գնահատման փորձագիտական զեկույց:

2024 թ.-ին Հավատարմագրման պետական գրանցամատյանում ներառվել է նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի հավատարմագրման մասին որոշումը: Բուհը հավատարմագրվել է ամերիկյան WSCUC գործակալության կողմից:

Հաշվետու տարվա ընթացքում DEQAR-ում ներբեռնվել է 6 բուհի արտաքին գնահատման փորձագիտական զեկույց:

ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրում

2024 թվականին Որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) իրականացրել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ 22 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում, որոնցից 20-ը՝ պետական, իսկ 2-ը՝ ոչ պետական:

Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄԿՈՒ) հավատարմագրումն իրականացվել է պետական ֆինանսավորմամբ:

Պետական ֆինանսավորմամբ հավատարմագրված քոլեջների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 5-ով՝ հասնելով 20-ի: Նշված 20 պետական ՄԿՈՒ հաստատություններից 12-ը գտնվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում, իսկ 8-ը՝ երկրորդ շրջափուլում:



ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրումների բաշխվածությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների և հավատարմագրման շրջափուլերի

2024 թվականին ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ է իրականացրել հետևյալ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում.

1. Ալավերդու պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
2. Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
3. Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
4. Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ (1-ին շրջափուլ),
5. Կապանի պետական բժշկական քոլեջ (1-ին շրջափուլ),
6. Բերդի բազմագործառութային պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
7. Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ (1-ին շրջափուլ),
8. Ավիաուսումնական կենտրոն (1-ին շրջափուլ),
9. Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ (1-ին շրջափուլ),
10. Գյումրու պետական տեխնիկական քոլեջ (1-ին շրջափուլ),
11. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջ (1-ին շրջափուլ),
12. Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ (1-ին շրջափուլ),
13. Աբովյանի էներգետիկական պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
14. Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
15. Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
16. Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
17. Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ (2-րդ շրջափուլ),
18. Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշեվի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ (2-րդ շրջափուլ),
19. Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ (2-րդ շրջափուլ),
20. Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ (2-րդ շրջափուլ):

Նշված 20 ՄԿՈՒ հաստատություններին ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներին նախապատրաստելու նպատակով ՈԱԱԿ-ը կազմակերպել է 4-օրյա առցանց աշխատաժողով, որին մասնակցել է շուրջ 100 աշխատակից:

Բացի այդ, ՄԿՈՒ հաստատություններին ընթացիկ աջակցություն տրամադրելու նպատակով կազմակերպվել են խորհրդատվական 2 հանդիպումներ:

Հաշվետու տարում սեփական ֆինանսավորմամբ ինստիտուցիոնալ հավատարմագրման են դիմել հետևյալ ոչ պետական 2 ՄԿՈՒ հաստատությունները.

- Պրովիզոր-նկարիչ Լ.Սարգսյանի անվան բժշկական քոլեջ,
- Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջ:

20 ՄԿՈՒ հաստատություններին ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներին նախապատրաստելու նպատակով ՈԱԱԿ-ը կազմակերպել է 4-օրյա առցանց աշխատաժողով, որին մասնակցել է շուրջ 100 աշխատակից:

Համակարգային խնդիրների լուծման նախաձեռնում

ՄԿՈ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների ընթացքում ՈԱԱԿ-ը, դիտարկելով հաստատությունների զարգացման դինամիկան, արձանագրել է, որ բարելավման շարունակականությունը խթանելու համար անհրաժեշտ է զուգահեռաբար աշխատել հաստատությունների ներքին կարողությունների ամրապնդման վրա:

Այս իրողությունները հիմք են դարձել ՈԱԱԿ-ի կողմից մի շարք համակարգային նախաձեռնությունների ձևավորման համար:

ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ մեկնարկած QA4VET (Փորձնական հավատարմագրման իրականացում՝ աջակցելու որակի ապահովմանը Հայաստանի ՄԿՈ հաստատություններում) Erasmus+ կարողությունների զարգացման ծրագիրը, որը 2024 թվականին ստացել է ֆինանսավորում, նպատակ ունի աջակցելու ՄԿՈ հաստատություններին՝ ձևավորելու վերլուծական հմտություններ, բարելավելու տվյալների վրա հիմնված ինքնավերլուծության կարողությունները: Ծրագիրը կիրականացվի փորձնական հավատարմագրման մոդելով, որը միաժամանակ կծառայի որպես ուսուցողական գործընթաց հաստատությունների համար:

ՈԱԱԿ-ը նաև դիմել է Հովնանյան կրթական հիմնադրամին, ներկայացնելով ծրագիր, որն ուղղված է ՄԿՈ համակարգի 80 դասախոսների թվային և հետազոտական կարողությունների զարգացմանը: Նախաձեռնության նպատակը դասախոսներին գործնական աջակցություն տրամադրելն է՝ դասավանդման և ուսանողների հետ աշխատանքի մեջ ժամանակակից գործիքների կիրառման ուղղությամբ:

Այս կերպ՝ հավատարմագրումն ու զարգացումը ներկայացվում են ոչ թե որպես տարանջատված փուլեր, այլ որպես փոխկապակցված գործընթաց:

ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրման վերաբերյալ որոշումների կայացում

2024 թվականի ընթացքում ՈԱԱԿ Հանձնաժողով կայացրել է հետևյալ 15 ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները.

- Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն, **6 տարի** ժամկետով,
- Սևանի բազմագործառութային պետական քոլեջ, **4 տարի** տարի ժամկետով,
- Երևանի Ա.Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Արարատի պետական բժշկական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Գավառի պետական բժշկական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան, **4 տարի** ժամկետով,
- Արարատի պետական բժշկական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Գյումրու պետական բժշկական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային N 2 պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ, **4 տարի** ժամկետով,
- Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ, **2 տարի** ժամկետով,
- Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ, **2 տարի** ժամկետով:

Մշտադիտարկումներ բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում

Հավատարմագրման գործընթացներից հետո հաստատությունների առաջընթացն ու առկա մարտահրավերները դիտարկելու, որակի ապահովման համակարգերի գործունեության արդյունավետության վերաբերյալ տվյալներ հավաքագրելու նպատակով ՈԱԱԿ-ը 2024թ.-ին շարունակել է իրականացնել մշտադիտարկումներ բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ և ծրագրային 10 մշտադիտարկում: Մասնագիտական ուսումնական 20 հաստատություններում դիտարկվել են որակի ապահովման մշակույթի զարգացման ընթացքը, գործատուների հետ համատեղ ռեսուրսների կիրառման, դասավանդման գործընթացներում ներգրավման և վերջնարդյունքներն աշխատաշուկայի պահանջներին համահնչեցնելու հնարավորությունները:

Հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների դեպքում մշտադիտարկման գործընթացի առանցքում են եղել Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ շեշտադրված ուղղություններով հաստատության առաջընթացը, հավատարմագրումից հետո հաստատությունների կողմից մշակված Թերությունների վերացման ծրագրի իրականացման ընթացքը:

Կրթական ծրագրերի մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են կրթական ծրագրերի ընթացիկ գնահատման, բարելավումների իրականացման, վերջնարդյունքների ձեռքբերման համար համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմի ու ենթակառուցվածքների համալրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաև որակի ապահովման համակարգի ազդեցությունը մասնագիտական կրթական ծրագրերի խնդիրների վերհանման, լավ փորձի բացահայտման ու տարածման ուղղությամբ:

Դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած ուսումնական հաստատությունների դեպքում մշտադիտարկման ընթացքում դիտարկվել են հաստատությունների ռազմավարական զարգացման գործընթացները, որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Չհավատարմագրված ուսումնական հաստատությունների մշտադիտարկումները ցույց են տվել, որ այս հաստատություններում դեռևս որակի ապահովման համակարգը ներդրված չէ, առկա չեն տվյալների հավաքագրման մեխանիզմներ, որոնք կարող են նպաստել կառավարչական որոշումների կայացմանը՝ ապահովելու հաստատության ռազմավարական երկարաժամկետ զարգացումը:

2024 թ. ՈԱԱԿ-ը մեկնարկել է նաև ՀՀ բուհերի կազմում գործող քոլեջների որակի ապահովման համակարգերի մշտադիտարկման գործընթացները՝ վերլուծելու նման հաստատությունների կառավարման առանձնահատկությունները և որակի ապահովման մեխանիզմները:

ՈԱԱԿ մշտադիտարկումների ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել հաստատությունների ղեկավարների, կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների (նաև՝ գործատու-դասավանդողների), ուսանողների, որակի ապահովման պատասխանատուների հետ: Յուրաքանչյուր մշտադիտարկում ամփոփվել է հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ, որի ընթացքում ներկայացվել են գործընթացի արդյունքում բացահայտված դրական կողմերը և դեռևս առկա մարտահրավերները:



Մասնագիտությունների կրթական ծրագրեր

Կրթական ծրագրերի դիտարկում՝ հավատարմագրման գործընթացների շրջանակում

2024 թ. ՈԱԱԿ-ը շարունակել է իր ակտիվ գործունեությունը մասնագիտությունների կրթական ծրագրերի բարեփոխումները խթանելու ուղղությամբ՝ հավատարիմ մնալով կրթության բովանդակային բարելավման իր առաքելությանը:

2024 թ. ընթացքում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների շրջանակում ՈԱԱԿ փորձագետների կողմից ուսումնասիրվել են 4 բուհերի և 22 ՄԿՈ հաստատությունների 75 մասնագիտությունների կրթական ծրագրեր:

Մասնագիտական զրույց-քննարկումներ են տեղի ունեցել կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ազգային և միջազգային չափանիշներին կրթական ծրագրերի համահնչեցման հարցերը, գործատուների հետ համագործակցության հնարավորություններն ուսանողների կարողությունների զարգացման նպատակով, ռեսուրսների համատեղ կիրառման, դրանց բացակայության դեպքում առցանց գործիքների ներդրման հնարավորությունները:

Կրթական ծրագրերի ներքին աուդիտ՝ արտաքին փորձագետների ներգրավմամբ

ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովը բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման մասին որոշումներում սահմանել է, որ հաստատություններն իրենց կողմից իրականացվող կրթական ծրագրերի ներքին աուդիտ պետք է իրականացնեն՝ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
Հիմք ընդունելով Հավատարմագրման հանձնաժողովի որոշումներում սահմանված այս դրույթը՝ ՈԱԱԿ-ը հաշվետու տարվա ընթացքում նախաձեռնել է քննարկում հաստատությունների ղեկավար կազմի և որակի ապահովման պատասխանատուների մասնակցությամբ: Քննարկվել են ներքին աուդիտի իրականացման ժամանակցույցները, բուհերի մոտեցումները, գնահատման ձևաչափերը և չափանիշները:

Կրթական ծրագրերի բարելավման լավ փորձերի քննարկման աշխատաժողովներ

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է նախաձեռնել ՄԿԾ բարելավման լավ փորձերի տարածման հանդիպումները՝ հարթակ տրամադրելով հաստատությունների միջև երկխոսությունների ձևավորման ու փորձի փոխանակման նպատակով: **Այսպիսով, 2024 թ. ընթացքում իրականացվել է բուհերում ՄԿԾ բարելավման լավ փորձի տարածման 4 հանդիպում:** Հանդիպումների շրջանակում իրենց փորձառությամբ են կիսվել հետևյալ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները.

- Երևանի պետական բժշկական համալսարան,
- Հայկական բժշկական ինստիտուտ (հաշվետու տարվա ընթացքում՝ երկու փորձի ներկայացմամբ),
- Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,
- «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան,
- Գավառի պետական համալսարան,
- Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ,
- Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան:

Աշխատաժողովների ընթացքում քննարկվել են կոմպետենցիաների վրա հիմնված գնահատման համակարգի խնդիրները, միջառարկայական կապերի ձևավորման կարևորությունը, բենչմարքինգի իրականացման առանձնահատկություններն ու լավագույն փորձի տեղայնացման ձևերը, ինտեգրված դասերի կազմակերպման առավելությունները:

2024 թ. ընթացքում իրականացվել է ՄԿԾ-ների բարելավման հաջողված փորձի ներկայացման 4 աշխատաժողով բուհերի և 1 աշխատաժողով ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

2024թ. ընթացքում իրականացվել է ՄԿՈՒ հաստատությունների ՄԿԾ-ների բարելավման հաջողված փորձերի ներկայացման 1 աշխատաժողով: Հանդիպմանն իրենց փորձառությամբ են կիսվել հետևյալ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները.

- Սևանի բազմագործառութային պետական քոլեջ,
- Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են ՄԿՈՒ հաստատություններում ընթացիկ և ամփոփիչ գնահատման համակարգի առանձնահատկությունները, ուսանողներին տրվող առաջադրանքների մշակումը գործատուների հետ համագործակցությամբ:

Աշխատաժողովներին ՀՀ բուհերից և քոլեջներից մասնակցել են շուրջ 500 ներկայացուցիչներ, այդ թվում՝ հաստատության ղեկավարներ, ՄԿԾ ղեկավարներ, դասավանդողներ, որակի ապահովման կառույցների պատասխանատուներ:

Ներկայացված թեմատիկ քննարկումները, աշխատաժողովները և ուղեցույցները ձևավորվել են այնպես, որ լինեն գործնական և ուղղված ոչ թե ընթացակարգային համապատասխանությանը, այլ՝ ուսանողի կրթության որակի բարձրացմանը:

Այս մոտեցման միջոցով ՈԱԱԿ-ը նպաստում է, որպեսզի կրթական ծրագրերի բարելավման գործընթացները դուրս գան մեկ հաստատության սահմաններից և վերածվեն փոխադարձ մասնագիտական ուսուցման ազգային հարթակի:



Ձեռքբերումներ

Վերլուծելով հավատարմագրման գործընթացների, մշտադիտարկումների արդյունավետության գնահատման հարցաշարերի և մասնագիտական կրթության ոլորտի շահակիցների հետ հանդիպումների արդյունքները՝ հաշվետու տարում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- **Համատեղ հավատարմագրման մոդելի ներդրում և հաջող իրականացում Եվրոպական որակի ապահովման գործակալությունների հետ. 2024 թվականին ներդրվել և հաջողությամբ կիրառվել է համատեղ և կրկնակի հավատարմագրման մոդելը՝ ապահովելով հայաստանյան որակավորումների համադրելիությունը եվրոպական չափորոշիչներին և բարձրացնելով ազգային համակարգի միջազգային վստահելիությունը:**

- **Հավատարմագրման քաղաքականության վերափոխում՝ բովանդակային բարելավման ուղղվածությամբ. ՈԱԱԿ-ը ձևավորել է նոր Հանձնաժողով և նախաձեռնել է հավատարմագրման որոշումների կայացման քաղաքականության վերանայում՝ խթանելով կրթական ծրագրերի արդիականացումը, ռեսուրսների կայուն կառավարումը և տվյալահեն ղեկավարումը՝ հավատարմագրումը դարձնելով ոչ թե գնահատման, այլ բարելավման գործիք:**

- Որակի ապահովման գործընթացների թափանցիկության և միջազգային տեսանելիության ապահովում. շարունակվել է հավատարմագրման արդյունքների հրապարակումը DEQAR հարթակում՝ հավատարմագրման պետական գրանցամատյանի հետ համաժամանակյա կերպով ապահովելով որոշումների թափանցիկություն և ՀՀ բարձրագույն կրթության ճանաչելիություն եվրոպական մակարդակում:

- Համակարգային աջակցություն հաստատությունների ներքին կարողությունների զարգացմանը. մեկնարկել են երկու խոշոր կարողությունների զարգացման ծրագրեր՝ Erasmus+ QA4VET և Հովնանյան հիմնադրամի հետ նախաձեռնությունը՝ ուղղված տվյալահենք վերլուծության և դասախոսների հետազոտական ու թվային կարողությունների զարգացմանը:

- ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրման գործընթացների ընդլայնում և կարողությունների զարգացման խթանում. 2024 թվականին հավատարմագրվել է 22 ՄԿՈՒ հաստատություն՝ ներառյալ երկրորդ շրջափուլ անցնող 7 քոլեջ: Պետական ֆինանսավորման միջոցով ապահովվել է լայն ընդգրկում:

- Առաջընթացի գնահատման և ուսանողակենտրոն բարելավումների մեխանիզմների խթանում. ՈԱԱԿ-ը շարունակել է խթանել գնահատման արդյունավետության ցուցիչների կիրառումը և ձևավորող գնահատման մեխանիզմների ներդրումը՝ հատկապես ՄԿՈՒ հաստատություններում, որտեղ երկրորդ շրջափուլի հավատարմագրման ընթացքում արձանագրվել է առաջընթաց տվյալների վրա հիմնված որոշումների կայացման և ուսանողի շարունակական առաջընթացի ապահովման ուղղությամբ:

Հաջողության չափանիշ

Մասնագիտական կրթության խնդիրների և ուսանողների կարիքների վերաբերյալ հետազոտական հենքը մեծացել է: Ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնելու համար առկա են բավարար քանակի մասնագետներ:

Փաստեր

ՈԱԱԿ-ը 2024 թ. շարունակել է իր գործունեությունը ՀՀ-ում փորձագիտական կարողությունների զարգացման ուղղությամբ՝ իրականացնելով հետևյալ միջոցառումները.

- կարողությունների զարգացման վերապատրաստումներ,
- աշխատաժողովներ,
- քննարկումներ,
- ուսանողների և դասախոսների շրջանում լավ փորձի տարածմանն ուղղված միջոցառումներ:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը կազմակերպել է փորձագիտական վերապատրաստումներ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների (դասախոսներ, որակի ապահովման պատասխանատուներ, կրթական ծրագրերի պատասխանատուներ) համար՝ փորձագիտական բազան անհրաժեշտ ոլորտները ներկայացնող մասնագետներով համալրելու նպատակով:

Հիմք ընդունելով հաշվետու տարվա ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատությունների ուղղությունները և դրանց շրջանակում դիտարկման ենթակա կրթական ծրագրերը՝ վերապատրաստումներում առավելապես ընդգրկվել են բժշկության, տեղեկատվական տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, արվեստի, կառավարման, սպասարկման և այլ ոլորտների ներկայացուցիչներ:

Կազմակերպվել է փորձագիտական 4 վերապատրաստում, որի արդյունքում ՈԱԱԿ-ի փորձագիտական բազան համալրվել է շուրջ 85 փորձագետների թեկնածուներով:

Փորձագիտական խմբերում ներգրավվող ուսանողների կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի շրջանակներում շարունակվել են դասընթացները ՀՀ տարբեր բուհերից և քոլեջներից ներգրավված ուսանողների շրջանում: Հաշվետու տարվա ընթացքում ուսանող-փորձագետների բազան համալրվել է շուրջ 50 ուսանողներով:

ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի ուսանող անդամ, «Ուսանողության ձայն» նախագծի շրջանավարտ ուսանողը վերընդգրկվել է Եվրոպական ուսանողական միության (ESU) որակի ապահովման խմբում:

2024 թ. բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացներում ներգրավվել են 20 փորձագետներ, որոնցից 11-ը՝ տեղացի փորձագետներ, 5-ը՝ միջազգային փորձագետներ, 4-ը՝ ուսանող փորձագետներ:

2024 թ. ՄԿՈ հաստատությունների հավատարմագրման գործընթացներում ներգրավվել են 88 փորձագետներ, որոնցից 66-ը (առանց կրկնության 42) տեղացի փորձագետներ, իսկ 22-ը (առանց կրկնության 14)՝ ուսանողներ ՀՀ տարբեր ուսումնական հաստատություններից և կազմակերպություններից:

2024 թ. բուհերի հավատարմագրման գործընթացներում ներգրավվել են 20 փորձագետներ, որոնցից 11-ը՝ տեղացի փորձագետներ, 5-ը միջազգային փորձագետներ, 4-ը՝ ուսանող փորձագետներ:

2024 թ. ՄԿՈ հաստատությունների հավատարմագրման գործընթացներում ներգրավվել են 88 փորձագետներ, որոնցից 66-ը՝ տեղացի փորձագետներ, իսկ 22-ը ՝ ուսանողներ ՀՀ տարբեր ուսումնական հաստատություններից և կազմակերպություններից:

Ձեռքբերումներ

Վերլուծելով հավատարմագրման գործընթացներին մասնակցած փորձագետների և ՄՈՒՀ-երի կողմից լրացված հարցաշարերի արդյունքները, դիտարկելով Հանձնաժողովի կարծիքները՝ հաշվետու տարում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- ՈԱԱԿ վերապատրաստումները նպաստել են ՀՀ-ում փորձագիտական կարողությունների ձևավորմանը ինչպես բուհական, այնպես էլ միջին մասնագիտական կրթության համակարգում:

- Հաստատություններն իրենց ռազմավարական պլանավորման հիմքում դնում են փորձագիտական խորհրդատվությունները: Փորձագիտական զեկույցները դարձել են կարևոր ուղենիշներ հաստատությունների կայուն զարգացման համար:

- ՈԱԱԿ փորձագետներն օգտագործում են իրենց կարողությունները հաստատությունների ներքին որակի ապահովման համակարգերի զարգացման, կրթական ծրագրերի բարելավման գործընթացներն իրականացնելու համար:

Հաջողության չափանիշ

Կրթության որակի մշակույթի շուրջ շահակիցների տարբեր խմբերի միջև հաղորդակցության և համագործակցության մեծացում:

Փաստեր

2024 թ. ՈԱԱԿ առաջնահերթություններից են շահակիցների հետ համագործակցության ընդլայնումն ու զարգացումը, ինչի նպատակով իրականացվել են տարբեր միջոցառումներ.

- միջազգային համատեղ կրկնակի հավատրմագրման գործընթացների քննարկում,
- ՄԿՈ համակարգում միջազգային ֆորում և դրա շրջանակներում քննարկումներ,
- փորձի փոխանակման միջոցառումներ,
- հանդիպումներ ուսանողների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների և ՈԱ պատասխանատուների հետ:

Շեշտադրելով ոլորտային միջազգային պահանջների հիման վրա ուսումնական հաստատություններին տրվող գնահատումն ու հետադարձ կապը, ՀՀ բարձրագույն կրթության միջազգային ճանաչման և շարժունության հնարավորությունների ընդլայնումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ կառավարման և կրթական ծրագրերի միասնական գնահատումը՝ **հաշվետու տարվա ընթացքում գերմանական AQAS գործակալության հետ համագործակցությամբ ՀՊՏՀ-ում կազմակերպվել է համատեղ միջազգային հավատարմագրման գործընթացի առանձնահատկություններին նվիրված աշխատաժողով, որին մասնակցել են 28 հավատարմագրված բուհերի շուրջ 60 ներկայացուցիչներ:**

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ն ակտիվորեն համագործակցել է նաև Բրիտանական խորհրդի հետ: Համագործակցության շրջանակներում նախաձեռնված ֆորումի ժամանակ ՀՀ ԿԳՄՍՆ, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, ՀՀ բուհերի ղեկավար կազմերի մասնակցությամբ քննարկվել են միջազգային համատեղ հավատարմագրումների առանձնահատկությունները: Ֆորումի շրջանակներում շահակիցներին են ներկայացվել նաև Հայաստանի Հանրապետության և Միացյալ Թագավորության կրթական փորձն ու տեսլականները բարձրագույն կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության խորացման ուղղությամբ:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը նախաձեռնել է նաև միջազգային ֆորումների և աշխատաժողովների հյուրընկալումը Հայաստան՝ նպատակ ունենալով խթանել տեղական և միջազգային համագործակցության զարգացումը և դառնալ հարթակ Հայաստանի և այլ երկրների առաջավոր փորձի փոխանակման համար: Այս ուղղությամբ հաշվետու տարում ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ Հայաստանը հյուրընկալել է Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) գործընկերային ֆորումը: **ԵԿՀ-ի գործընկերային ֆորումը, որն ավանդաբար կազմակերպվում է տարեկան երկու անգամ, 2024 թվականի մայիսի 21-23-ը՝ կայացել է Երևանում: Ֆորումի հիմնական թեման, ՈԱԱԿ նախաձեռնությամբ, ընտրվել է «Աշխատանքին միտված ձևավորող գնահատման որակի ապահովումը»:**
Ֆորումի ընթացքում ՀՀ են այցելել 11 գործընկեր-փորձագետներ՝ 9 երկրներից, ներառյալ Իսրայելը, Վրաստանը, Ալբանիան, Հորդանանը, Սերբիան և այլ երկրներ: Վրաստանի և Իսրայելի ներկայացուցիչները նաև կիսվել են իրենց երկրների փորձով ձևավորող գնահատման համակարգի մշակման ուղղությամբ:

Ֆորումի ընթացքում առաջին անգամ կիրառվել է «Walk and Talk» («Քայլելով զրուցել») ձևաչափով հանդիպումների իրականացումը, որը նպաստել է առավել ազատ և արդյունավետ մասնագիտական քննարկումներին:

Բացի ՈԱԱԿ-ից, Ֆորումի երկու օրերը կազմակերպվել են անմիջապես միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում, մասնավորապես՝

- Երևանի պետական բժշկական համալսարանի քոլեջում,
- Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոնում,
- Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում:

Միջազգային գործընկերներն այս հաստատություններում մասնակցել են ուսանողների գործնական պարապմունքներին, դիտարկել դասավանդման և ձևավորող գնահատման գործընթացները իրական միջավայրում՝ քննարկումներ ունենալով ուսանողների և դասախոսական անձնակազմի հետ:

Ֆորումի արդյունքներն ամփոփվել են գործընկերների կողմից պատրաստված զեկույցով, որտեղ ներառվել են առաջարկություններ գործատուների մասնակցությամբ ձևավորող գնահատման համակարգի զարգացման վերաբերյալ: Այս առաջարկությունները կարևոր հիմք են հանդիսացել ՈԱԱԿ-ի հետագա նախաձեռնությունների համար՝ ուղղված ՀՀ ՄԿՈ ոլորտում գնահատման համակարգի կատարելագործմանը: **ՈԱԱԿ-ը մտադիր է շարունակել համագործակցությունը Եվրոպական կրթական հիմնադրամի հետ՝ նպատակ ունենալով ներգրավել նոր ծրագրեր, որոնք կնպաստեն ՀՀ-ում դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների զարգացմանը և գնահատման համակարգում եղած լավ փորձերի տարածմանը:**

ՈԱԱԿ-ում իրականացվել է նաև քննարկում ՀՀ Կրթության տեսչական մարմնի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են կրթության իրականացման տվյալների հավաքագրման մեխանիզմները և դրանց հիմքով գնահատումների անցկացումը, հնարավոր ռիսկերի տեսակները և դրանց բացահայտման ու կանխարգելման ուղիները, գնահատումների ազդեցությունը կրթության բովանդակության բարելավման վրա:

Շահակիցների հետ որակի ապահովման շրջանակներում հաղորդակցության ընդլայնման նպատակով կազմակերպվել են նաև հանդիպումներ բուհերի և ՄԿՈ հաստատությունների ղեկավար կազմերի, ՈԱ պատասխանատուների, դասախոսական կազմի հետ:

ՄԿՈՒ հաստատությունների համար կազմակերպվել է նաև Ինքնավերլուծության իրականացման վերաբերյալ վերապատրաստում՝ ընդգրկելով 20 ՄԿՈՒ հաստատությունից մոտ 100 մասնակից:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ բուհերի ներկայացուցիչների համար իրականցվել են կրթական ծրագրերի գնահատմանն ու բարելավմանն ուղղված վերապատրաստումներ: Վերապատրաստումների առանցքում են եղել գնահատման համակարգի բարելավումը, վերջնարդյունքների վրա հիմնված կրթության իրականացումը, դասի պլանավորումը, առաջադրանքների բազաների ձևավորումը: **Տեղի են ունեցել վերապատրաստումներ 6 բուհերի շուրջ 90 ներկայացուցիչների հետ:**

2024թ.-ին կազմակերպվել են նաև ուսանողների հետ քննարկումներ, որոնց շրջանակներում ՈԱԱԿ ուսանող-փորձագետ, Հավատարմագրման հանձնաժողովի ուսանող-անդամն ապագա ուսանող փորձագետներին ներկայացրել է իր փորձառությունը, Եվրոպական ուսանողական միությանն անդամակցելու հնարավորությունները: Ուսանող-փորձագետների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև ՀՀ կրթական համակարգի խնդիրները, ուսանող-փորձագետների դերն արտաքին գնահատման գործընթացներում:

ՄԿՈՒ հաստատությունների հետ համագործակցությունների շրջանակում Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում Ուսանողական շաբաթ ծրագրի ընթացքում ներկայացվել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագիծը, քննարկվել են ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում, ուսանողների կարիքների գնահատման ազդեցությունը կրթական բարեփոխումների վրա, հավատարմագրման դերը կրթության արժանահավատության բարձրացման գործում:

Հանդիպմանն իրենց փորձառությամբ կիսվել են նախագծի մասնակից քոլեջի ուսանողներն ու շրջանավարտները:

Ուսանողության ձայն

Լուսաբանում

Հաշվետու 2024թ. ընթացքում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, հավատարիմ իր առաքելությանը՝ ապահովել հաշվետվողականություն իր բոլոր շահակիցների համար, առաջնորդվելով 2021-2025թթ. ռազմավարական ծրագրով և տարեկան գործողությունների պլանով, ապահովել է ՈԱԱԿ գործունեության հանրայնացումը պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում և լրատվամիջոցներում:

Հիմնադրամի գործունեության հանրայնացում

ՈԱԱԿ-ի գործունեությունը լայնորեն լուսաբանվել է պաշտոնական կայքում (www.anqa.am), սոցիալական ցանցերում (Facebook, LinkedIn, YouTube) և լրատվամիջոցներում:

Հաշվետու տարում պաշտոնական կայքում հրապարակվել է 145 լուր՝ և հայերեն, և անգլերեն:

Լուսաբանված հիմնական միջոցառումներ

26 **փորձագիտական այց՝** բուհեր և քոլեջներ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով,

19 **հավատարմագրման որոշում՝** կայացված հավատարմագրման հանձնաժողովի կողմից,

20 **աշխատաժողով՝** Հայաստանում և արտերկրում՝ փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման նպատակով,

5 **առցանց աշխատաժողով՝** նվիրված բուհերում և քոլեջներում առկա մասնագիտական կրթության որակի բարելավման լավագույն փորձի ներկայացմանը,

17 **հանդիպում** շահակիցների հետ,

7 **վերապատրաստում՝** փորձագետների, ուսանող փորձագետների և հավատարմագրվող հաստատությունների աշխատակիցների մասնակցությամբ,

2 **միջազգային համագործակցության հուշագիր՝** ստորագրված ՈԱԱԿ-ի և բրիտանական ու գերմանական որակի ապահովման գործակալությունների միջև,

3 **միջազգային աշխատաժողով՝** ՈԱԱԿ-ի կազմակերպմամբ:

Պաշտոնական կայքի վերլուծություն

Հաշվետու տարում, ըստ Google Analytics տվյալների, ՈԱԱԿ կայքն ունեցել է 59,138 էջադիտում և 21,214 ակտիվ օգտատեր: Օգտատերերն ընդհանուր առմամբ կատարել են 117,567 գործողություն: Նշենք, որ 2023թ. կայքն ունեցել է 16,000 օգտատեր, որոնք կատարել են 93,000 գործողություն:



ՈԱԱԿ կայքի օգտագործման հիմնական ցուցանիշները՝ համեմատական տվյալներ 2023 և 2024 թվականների համար

Ամենաշատ դիտված էջեր

- Գլխավոր էջ,
- Հավատարմագրում,
- Գլխավոր էջ անգլերենով,
- Հրապարակումներ,
- Որոնել,
- Փորձագետներ,
- Լուրեր:

Կայքի օգտատերերի վերլուծություն

Ըստ սարքերի՝ 21,000 օգտատերերից 13,000-ը կայք են մուտք գործել բջջային սարքերով: Սա հրամայական է դարձնում կայքի մոբայլ տարբերակի ստեղծման անհրաժեշտությունը:

Ըստ երկրների՝ Հայաստան (16,000), ԱՄՆ (1,900), ՌԴ (606), Ինդոնեզիա (412), Գերմանիա (287), Շվեդիա (271), Իռլանդիա (208):

Սոցիալական ցանցերում գործունեություն

Facebook

2024թ. ՈԱԱԿ-ի Facebook էջում հրապարակվել է 197 գրառում՝ լուսանկարներով, տեսանյութերով, վիզուալներով և տեքստով:

Էջն ունի 6,100 հետևորդ:

Տարեկան ցուցանիշներ՝

- Հասանելիություն (Reach)՝ 162,500,
- Ներգրավվածություն (Interaction)՝ 27,000,
- Դիտումներ (Views)՝ 370,900:



LinkedIn

- LinkedIn հարթակում կատարվել է 25 հրապարակում՝ անգլերենով:
- Էջն ունի 517 հետևորդ, որից 112-ը ավելացել են 2024թ.:

Տարեկան ցուցանիշներ՝

- Ցուցադրումներ՝ 13,996,
- Արձագանքներ՝ 502:

Google Business

2024թ. երկրորդ կեսին ՈԱԱԿ-ի Google Business պրոֆիլն ունեցել է 7,529 էջադիտում և 1,472 անգամ հայտնվել է որոնման արդյունքներում: Այս ցուցանիշները նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 27% և 21%-ով:

2024թ. երկրորդ կեսին ՈԱԱԿ-ի Google Business պրոֆիլն ունեցել է 7,529 էջադիտում և 1,472 անգամ հայտնվել է որոնման արդյունքներում:

ԶԼՄ-ներում լուսաբանում

2024թ. ՈԱԱԿ-ի վերաբերյալ ԶԼՄ-ներում կատարվել է 20 լուսաբանում: Հիմնական թեմաներն են՝

- ՈԱԱԿ-ի 15-ամյակ,
- «Ուսանողության ձայն» նախագծի 13-ամյակ,
- Ուսանող-փորձագետի դերակատարում,
- Միջազգային համագործակցություն,
- Էրազմուս+ ծրագրեր,
- ETF ֆորումի արդյունքներ:

Հիմնական լուսաբանող հարթակներն են՝

- Առաջին լրատվական ալիք,
- Հ2 ՀԸ,
- Հանրային ՀԸ («Առավոտ Լուսո», «Բաց հարթակ»),
- Շանթ ՀԸ («Առավոտը Շանթում»),
- Ֆրինյուզ ՀԸ,
- Հանրային ռադիո («Ռադիոլուր», «Դպրություն»),
- Արմենպրես,
- Ռադիո FM 103,8 («Խոշոր պլան»):

Առաջիկա քայլեր

- Կայքի մոբայլ տարբերակի ստեղծում՝ հաշվի առնելով, որ օգտատերերի 62%-ը կայք է այցելել բջջային սարքերով:
- Միջազգային հարթակներում ներկայության ընդլայնում՝ հաշվի առնելով արտերկրից կայքի այցելուների աճող թիվը:

Ձեռքբերումներ

Վերլուծելով իրականացված միջոցառումների, վերապատրաստումների արդյունավետության գնահատման հարցաշարերն ու շահակիցների հետ հանդիպումների արդյունքները՝ հաշվետու տարում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- Միջազգային համագործակցության խորացում և ճանաչելիության ընդլայնում. 2024 թվականին կազմակերպվել է 3 միջազգային աշխատաժողով, ստորագրվել 2 համագործակցության հուշագիր, որոնց միջոցով Հայաստանը ներկայացվել է՝ որպես վստահելի գործընկեր հավատարմագրման գործընթացներում:

- Ազգային և տարածաշրջանային շղթայով շահակիցների ընդգրկում. իրականացվել է 20 աշխատաժողով և շահակիցների հետ 17 հանդիպում, ներառյալ ուսանողներ, դասախոսներ, բուհերի և քոլեջների ղեկավարներ՝ բարձրացնելով կրթության որակի շուրջ ոլորտային երկխոսության ծավալը և կայուն փոխվստահության հիմքերը:

- Տեղեկատվության մատչելիության և հաշվետվողականության բարձրացում հանրային հարթակներում:

- ETF-ի հետ ռազմավարական համագործակցության ամրապնդում և ՄԿՈ համակարգի զարգացման նոր փուլ. Այս համագործակցությունը Հայաստանի համար դարձել է կարևոր հարթակ՝ ՄԿՈ քաղաքականության ձևավորման և միջազգային լավ փորձի տեղայնացման տեսանկյունից:

Հաջողության չափանիշ

Տարեկան կտրվածքով հրապարակվում են թեմատիկ վերլուծություններ, հաշվետվություններ: Շահակիցները բավավարված են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացներից և դրանց իրավակարգավորումներից:

Փաստեր

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը առաջարկությունների լայնածավալ փաթեթ է ներկայացրել «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, որոնք վերաբերում են ոչ միայն հավատարմագրմանը, այլև՝ լիցենզավորմանը, որակի ապահովմանը, օրենքի հասկացություններին, սկզբունքներին և ուղղություններին:

2024թ. ՈԱԱԿ-ը լիազոր մարմնի միջոցով ՀՀ կառավարության հաստատման է ներկայացրել Հավատարմագրման պետական կարգի փոփոխությունները, որոնք վերաբերում են պայմանով հավատարմագրմանը և դրա ժամկետներին, ինչպես նաև ընթացիկ փոփոխություններին:

Բացի այդ **հաշվետու տարում հաստատման է ներկայացրել ՈԱԱԿ-ի գործունեության մի շարք ուղղությունները կարգավորող 5 իրավական ակտեր.**

- Գրանցամատյանի վարման կարգը, որը մշակվել և ընդունվել է՝ DEQAR-ի պահանջները հաշվի առնելով:
- Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության նոր խմբագրությամբ ընթացակարգը, որտեղ հաշվի են առնվել ENQA-ի դիտողություններն ու առաջարկությունները՝ մասնավորապես կազմի վերաբերյալ:

- ՄԿՈ ինստիտուցիոնալ հավատարմագրման սակագները՝ պայմանով հավատարմագրման դեպքում, որի հիմքը փոփոխված Հավատարմագրման պետական կարգն էր:

- ՄԿՈ ծրագրային հավատարմագրման սակագները, որի հիմքը ՀՀ կառավարության կողմից հաստատված Կրթության մինչև 2030 զարգացման ծրագրից բխող միջոցառումներն են, որով սահմանվում է կարգավորվող մասնագիտությունների ծրագրային հավատարմագրումը:

- Բուհերի՝ պայմանով հավատարմագրման սակագները:

Մշակման փուլում են շուրջ 10 ներքին իրավական ակտ և դրանցից բխող ձևաչափեր, որոնք նախատեսվում են հաստատվել 2025 թվականին:

Դրանք են.

- աշխատանքային ներքին կարգապահական կանոնները,
- բողոքարկման կարգը,
- ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման նոր խմբագրությամբ ձեռնարկը,
- փորձագիտական խմբի ձևավորման կարգը,
- Հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշումների կայացման քաղաքականությունը,
- մշտադիտարկումների անցկացման քաղաքականությունը և ընթացակարգը,
- ծրագրային հավատարմագրման ձևաչափերը,
- պայմանով հավատարմագրման փորձագիտական զեկույցի ձևաչափը,
- պայմանով հավատարմագրում ստացած ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ գնահատման ձևաչափը:

Ընդունված և մշակման փուլում գտնվող ներքին իրավական ակտերը հաշվի են առնում ՈԱԱԿ գործունեության շարունակական բարելավումները, շահակիցներից ստացվող առաջարկությունները, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունները:

Հաշվետու տարում ՈԱԱԿ կազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը ենթարկվել է փոփոխությունների, մասնավորապես սահմանվել է միջազգային խորհրդատվական խումբը, որը, ըստ անհրաժեշտության, խորհրդատվություն կարող է ներկայացնել ինչպես տնօրենին, այնպես էլ հոգաբարձուների խորհրդին կրթության որակի ապահովման միջազգային ասպարեզում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ:

Կառուցվածքից հանվել են ոլորտային հանձնաժողովները, որոնց դերը պարբերաբար իրականացնում են փորձագիտական խմբերը:

Համակարգային վերլուծություններ

ՈԱԱԿ-ը առանձնակի կարևորություն է տալիս թեմատիկ վերլուծությունների պարբերական իրականացմանը: Հետազոտության թեմաների ընտրությունը կատարվում է շահակիցների հետ քննարկումների արդյունքում կամ հավատամագրման գործընթացներում մատնանշված զարգացումներով:

2024 թվականին ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվել է «Աշխատանքին միտված ձևավորող գնահատման որակի ապահովում» խորագրով ETF ֆորումը: Ֆորումի շրջանակներում, ՈԱԱԿ-ն իրականացրել է ՄԿՈ համակարգի ուսումնասիրություն, ձևավորող գնահատման քոլեջների փորձի դիտարկում, որի արդյունքում դուրս է բերվել երկրում առկա լավագույն փորձը: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՈԱԱԿ-ը պատրաստել է ազգային համատեքստի վերաբերյալ զեկույց և ներկայացրել ETF փորձագետներին: Զեկույցին հաջորդել է փորձագետների այցը և վերջիններիս առաջարկությունները:

Որակի ապահովման համակարգի ներդրումը և որակի մշակույթի ձևավորումը գնահատելու նպատակով պլանավորվել է իրականացնել համակարգային վերլուծություն ՄԿՈՒ ոլորտում: Հետազոտության իրականացման նպատակով մշակվել է հարցաթերթիկը և վերլուծության մեթոդաբանությունը: Վերլուծության իրականացումը պլանավորված է 2025թ.-ին:

Շարունակվել են հավատարմագրման գործընթացի արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման աշխատանքները: Յուրաքանչյուր հավատարմագրումից հետո հիմնական շահակիցներից (ՄՈՒՀ-եր, փորձագետներ՝ տեղացի և միջազգային, համակարգողներ) հետադարձ կապ է ստացվել գործընթացի արդյունավետության վերաբերյալ: Հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը գնահատվում է 3 տարին մեկ հաճախականությամբ: Տվյալների ամփոփումն ու վերլուծության արդյունքների հրապարակումը նախատեսվում է 2025թ.-ին:

ՈԱԱԿ-ի անձնակազմը, ներգրավված լինելով Բոլոնիայի թեմատիկ աշխատանքային խմբերում, իրականացրել է ուսումնասիրություններ՝ ՀՀ համատեքստի ուսումնասիրման համար մի քանի ուղղություններով՝

- **ՈԱՇ-ի ինքնահավաստագրում,**
- **Միկրո-որակավորումներ:**

Հետազոտության արդյունքները համադրվել են այլ երկրների փորձի հետ և ձևակերպվել առաջարկությունների տեսքով:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը իրականացրել է ENQA-ի կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունների ուղղությամբ ձեռքբերումների և կատարված բարելավումների միջանկյալ վերլուծություն: Վերլուծության արդյունքները, ըստ ESG (ՈԱԵՉՈՒ) չափորոշիչների, ամփոփվել են զեկույցի տեսքով և ներկայացվել ENQA-ին:

2024 թվականին թեմատիկ վերլուծություններ շարունակվել են նաև ERASMUS+ ծրագրերի շրջանակներում: **Մասնավորապես MICRO-GEAR ծրագրի ծրջանակներում ՈԱԱԿ-ը իրականացրել է միկրո-որակավորումներին վերաբերող ՀՀ օրենսդրական հենքի ուսումնասիրություն, վեր հանել բացերն ու հիմնախնդիրները, ուսումնասիրել է երկրում միկրո-որակավորումների իրականացման փաստացի վիճակը:** Արդյունքներն ընդհանրացվել և ներկայացվել են Թբիլիսիում տեղի ունեցած ծրագրի հերթական հանդիպման ժամանակ: Հետագայում աշխատանքները շարունակվել են երկրում միկրո-որակավորումներին առնչվող ստատուս քվո վերլուծության շրջանակներում:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է «Արհեստական բանականության ազդեցությունը հավատարմագրման վրա» թեմայով վերլուծություն: Հետազոտության հիմք են հանդիսացել 2011-2023 թթ. հավատարմագրումների ՄՈՒՀ-երի ինքնավերլուծության զեկույցներն ու փորձագիտական զեկույցները: Հետազոտության արդյունքները կհրապարակվեն 2025թ.-ին:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է «Արհեստական բանականության ազդեցությունը հավատարմագրման վրա» թեմայով վերլուծություն: Հետազոտության հիմք են հանդիսացել 2011-2023 թթ. հավատարմագրումների ՄՈՒՀ-երի ինքնավերլուծության զեկույցներն ու փորձագիտական զեկույցները:



Ձեռքբերումներ

Դիտարկելով թեմատիկ վերլուծության արդյունքները՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- Ընդլայնվել են կրթության որակի իրավակարգավորման հիմքերը՝ համադրելով ազգային մոտեցումները միջազգային պահանջներին:
- Ձևավորվել է նոր վերլուծական հենք միկրո-որակավորումների և արհեստական բանականության վերաբերյալ՝ նպաստելով տվյալների վրա հիմնված կրթական քաղաքականության մշակմանը:
- Հաստատվել է ՈԱԱԿ-ի գործելակերպի ներդաշնակեցում շահակիցների ակնկալիքներին և միջազգային կառույցների գնահատումներին՝ ուղղված համակարգի կանխատեսելիության և վստահելիության բարձրացմանը:

Հաջողության չափանիշ

ՈԱԱԿ-ի գործընթացները ճանաչվում են շահակիցների կողմից՝ որպես միջազգային լավագույն փորձի տարածման աղբյուր: ՈԱԱԿ-ը 2021-2022 թթ. հաջողությամբ պահպանել է Որակի ապահովման եվրոպական ասոցացիայի անդամակցությունը և Եվրոպական ռեգիստրում ընդգրկվածությունը:

Փաստեր

2024 թ. ՈԱԱԿ-ը շարունակել է խթանել ՀՀ բարձրագույն և մասնագիտական կրթության միջազգայնացումը, միջազգային փորձի տարածումը և շնորհվող որակավորումների միջազգային ճանաչումը:

Միջազգային ցանցերին և կառույցներին անդամակցություն

ՈԱԱԿ-ը հանդիսանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ և գրանցված է Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR):

ՈԱԱԿ-ն անդամակցում է նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին (INQAAHE) և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցին (CEENQA):

ՈԱԱԿ-ի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած բուհերի զեկույցները հասանելի են Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական շտեմարանում (DEQAR):

ՈԱԱԿ տնօրենը հանդիսանում է ENQA խորհրդի անդամ, ինչը թույլ է տալիս ներգրավվել եվրոպական կրթական բարեփոխումների քննարկումներին և լավագույն փորձի ներդրմանը ՀՀ-ում:



Հաշվետու տարվա ընթացքում ENQA անդամների ֆորումի շրջանակներում ՈԱԱԿ-ը ներկայացրել է «Արհեստական բանականության կիրառությունն ինստիտուցիոնալ հավատարմագրման ազդեցությունը բուհերում գնահատելու նպատակով» վերլուծության մեթոդաբանությունը և արդյունքները:

ՈԱԱԿ փորձառությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել ֆորումի մասնակիցների շրջանակում. նույն տարում առցանց հարթակում ՈԱԱԿ-ի աշխատակազմի անդամները հետազոտության մեթոդաբանությունը ներկայացրել են Ֆրանսիայի HCERES գործակալության աշխատակազմին:

ՈԱԱԿ-ի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած բուհերի զեկույցները հասանելի են Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական շտեմարանում (DEQAR):

ՈԱԱԿ-ը հանդիսանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ և գրանցված է Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR):

Միջազգային համագործակցության ընդլայնում և համատեղ կրկնակի հավատարմագրումների իրականացում

2024թ. ՈԱԱԿ-ը քայլեր է նախաձեռնել միջազգային համագործակցության ընդլայնման և արտաքին գնահատման գործընթացների համատեղ իրականացման նպատակով:

Գերմանական AQAS գործակալության հետ համագործակցությամբ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի ունեցած աշխատաժողովի ընթացքում քննարկվել են համատեղ հավատարմագրման առանձնահատկությունները.

- ազգային և միջազգային չափանիշների համադրում՝ հիմք ընդունելով երկու գործակալությունների չափանիշների համահունչությունը Եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին (ESG),
- մեկ փորձագիտական այցի իրականացում տեղացի և միջազգային փորձագետների ներգրավմամբ՝ ներառելով ոլորտային գործատուներ երկու երկրներից,
- մեկ փորձագիտական զեկույց՝ բարելավմանը միտված խորհրդատվություններով,
- երկու գործակալությունների կողմից կայացված և միջազգայնորեն ճանաչված որոշումներ:

Համագործակցության շրջանակներում մեկնարկել է ՀՊՏՀ համատեղ կրկնակի հավատարմագրման գործընթացը, որը ենթադրում է.

- ինստիտուցիոնալ կառավարման և կրթական ծրագրերի իրականացման գնահատում ազգային և միջազգային ոլորտային չափանիշներով, որոնք նպաստում են կրթության որակի բարձրացմանը և միջազգային ճանաչելիությանը,
- միասնական զեկույցի ձևավորում բարելավման առաջարկներով,
- հավատարմագրման մասին երկու որոշում՝ հայաստանյան և օտարերկրյա հավատարմագրման գործակալությունից:

Հաշվետու տարվա ընթացքում Բրիտանական խորհրդի, ՀՀ ԿԳՄՍՆ և ՈԱԱԿ համագործակցությամբ անցկացվել է «Գլոբալացում՝ բարձրագույն կրթության միջազգայնացումը Հայաստանում» խորագրով ֆորումը: Միջոցառմանը ներկայացվել են Հայաստանի Հանրապետության և Միացյալ Թագավորության արտաքին գնահատման փորձն ու տեսլականը, համատեղ հավատարմագրման առավելությունները:

Աշխատաժողովների շրջանակում ՈԱԱԿ-ը փոխըմբռնման հուշագրեր է ստորագրել

- **գերմանական AQAS գործակալության**
- **Միացյալ Թագավորության Որակի ապահովման գործակալության (QAA) հետ**

համագործակցության շարունակականության և համատեղ հավատարմագրումների իրականացման նպատակով:

Բոլոնիայի թեմատիկ խմբերի աշխատանքներին մասնակցություն

2024 թվականին ՈԱԱԿ-ի երկու ներկայացուցիչներ, ներգրավված լինելով Բոլոնիայի թեմատիկ A (որակավորումների շրջանակ) և C (որակի ապահովում) խմբերի աշխատանքներում, մասնակցել են նախարարական գագաթնաժողովում ներկայացվող կոմյունիկեի հիմնախնդիրների ձևավորման աշխատանքներին և քննարկումներին, և համապատասխանաբար հանդես եկել մոտեցումների տեղայնացման առաջարկություններով:

Բոլոնիայի աշխատանքային խմբերի 2021-2024թթ. գործունեության ամփոփման և հետագա գործընթացների պլանավորման նպատակով ՈԱԱԿ աշխատակից ՀՀ ներկայացուցիչները մասնակցել են մի շարք քննարկումների Էստոնիայում, Լատվիայում, Բելգիայում և Ռումինիայում:

2024թ.-ին ՀՀ-ն դարձել է Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի Որակի ապահովում թեմատիկ ուղղության համանախագահող երկիր Ռումինիայի և Ֆրանսիայի հետ միասին:

2024թ.-ին ՀՀ-ն դարձել է Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի Որակի ապահովում թեմատիկ ուղղության համանախագահող երկիր Ռումինիայի և Ֆրանսիայի հետ միասին:

ՄԿՈՒ ոլորտում միջազգային համագործակցություն

ՈԱԱԿ-ն անդամակցում է Եվրոպական կրթական հիմնադրամին (ETF):

Համագործակցության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում ՀՀ-ում իրականացվել է «Աշխատանքին միտված ձևավորող գնահատման որակի ապահովում» խորագրով ETF ֆորումը:

ՈԱԱԿ նախաձեռնությամբ ֆորումի շրջանակներում դիտարկվել են ձևավորող գնահատման միջոցով շրջանավարտների զբաղվածությունը մեծացնելու և կարողություններն աշխատաշուկայի կարիքներին համապատասխանեցնելու հնարավորությունները:

Ֆորումը հնարավորություն է տվել ՀՀ ՄԿՈՒ համակարգի արտաքին գործընկերային գնահատում իրականացնել և բարելավման խորհրդատվություններ ստանալ ֆորումի անդամ միջազգային 11 փորձագետներից՝ 9 երկրներից, ներառյալ Իսրայելը, Վրաստանը, Ալբանիան, Հորդանանը, Սերբիան և այլն:

ETF-ի հետ համագործակցությամբ և ՈԱԱԿ նախաձեռնությամբ ՀՀ-ն դարձել է ETF ՄԿՈՒ համակարգի հայտորոշման գործիքը փորձարկող առաջին երկրներից մեկը:

Հայտորոշման գործիքը հիմնված է EQAVET (ՄԿՈ ոլորտում որակի ապահովման եվրոպական շրջանակ) ցուցիչների շրջանակի վրա: Այն ներառում է հիմնական հինգ տիրույթ.

- Քաղաքականություն և կառավարում,
- Որակավորումների հիմքում դրված պետական կրթական չափորոշիչներ,
- Կրթական ծառայությունների մատուցում,
- Գնահատում, վավերացում և հավաստագրում,
- Տվյալների և գիտելիքի ստեղծում:

ՀՀ-ում գործիքի փորձարկման ընթացքում դիտարկվել են երկու տիրույթներ՝ որակավորումների հիմքում դրված պետական կրթական չափորոշիչներ և կրթական ծառայությունների մատուցում:

Շահակիցների հետ քննարկվել են պետական կրթական չափորոշիչների մշակման և տեղայնացման, դուալ կրթության կազմակերպման, դասախոսական, վարչական համակազմերի կարիքների վերհանման և կարողությունների շարունակական զարգացման, ինչպես նաև կրթական գործընթացում գործատուների ներգրավման հարցերը:

Հավաքագրված տվյալների հիման վրա ՈԱԱԿ-ն իրականացնում է ՄԿՈ համակարգի ինքնավերլուծություն՝ ըստ հայտորոշման գործիքի ձևաչափի:

Արդյունքների ամփոփումը նախատեսվում է 2025 թվականին:

Միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցություն փորձի փոխանակման նպատակով

ՈԱԱԿ-ը ներգրավված է մի շարք ERASMUS+ ծրագրերում, որոնք ուղղված են ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացմանը, փորձի փոխանակմանը, որակի ապահովման համակարգերի զարգացմանը: Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ն ակտիվորեն ներգրավված է եղել հետևյալ ծրագրերում.

SMARTI (Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով). հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում ձևավորված EMI կենտրոնների ու մշակված մոդուլների արտաքին գնահատումն իրականացնելու նպատակով ՈԱԱԿ-ը տեղացի և միջազգային փորձագետների համար իրականացրել է աշխատաժողովներ՝ նվիրված արտաքին գործընկերային գնահատմանը, կիրառվող չափանիշներին և գնահատման ցուցիչներին:

Փորձագիտական խմբերն ուսումնասիրել են ծրագրի շահակից հանդիսացող 5 բուհերի ինքնավերլուծությունները և փորձարկված մոդուլները, իրականացրել են ռեսուրսների առցանց դիտարկում:



Գործընթացի շրջանակներում տեղի են ունեցել փորձագիտական մեկօրյա առցանց այցեր, որոնց ընթացքում հաստատությունների ղեկավար կազմերի, EMI կենտրոնների ղեկավարների, դասավանդողների, ուսանողների հետ քննարկվել են անգլերենով դասավանդվող մոդուլների մշակման և փորձարկման գործընթացը, անգլերենով մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսների վերապատրաստման մեթոդաբանությունը, EMI մոդուլների արդյունավետության և սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման գնահատման մեխանիզմները, Անգլալեզու մոդուլների ներդրման և դասավանդման գործընթացում առկա մարտահրավերները և հետագա բերալավման հնարավորությունները:

Ուսումնասիրություններն ամփոփվել են փորձագիտական զեկույցներում: Խորհրդատվությունների հիման վրա հաստատությունները մշակել են բարելավման ծրագրեր՝ ծրագրի ավարտից հետո ձեռքբերված արդյունքների պահպանման ու զարգացման նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ երկու աշխատակիցներ մասնակցել են նաև ծրագրի շրջանակներում Լատվիայի Հանրապետության Ռիգայի տեխնիկական համալսարան վերապատրաստման այցին՝ ծանոթանալու համալսարանի՝ անգլերենով դասավանդվող մոդուլներին, առարկայական ծրագրերի ստեղծմանը, ուսումնական պլանների մշակման գործընթացին: Աշխատաժողովի շրջանակներում ՈԱԱԿ ներկայացուցիչների կողմից ներկայացվել են նաև արտաքին գնահատման նախնական արդյունքները:

SMARTI ծրագրի շրջանակներում ձևավորված EMI կենտրոնների ու մշակված մոդուլների արտաքին գնահատումն իրականացնելու նպատակով ՈԱԱԿ-ը տեղացի և միջազգային փորձագետների համար իրականացրել է աշխատաժողովներ՝ նվիրված արտաքին գործընկերային գնահատմանը, կիրառվող չափանիշներին և գնահատման ցուցիչներին:

T-GREEN (Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի). ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ երկու աշխատակիցներ մասնակցել են Վիլնյուսում կայացած համատեղ կամ կրկնակի մագիստրոսական կրթական ծրագրերի մշակմանը նվիրված աշխատաժողովին:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են արդյունահենք կրթության սկզբունքների ներդաշնակեցումը, կրթական ծրագրերի կայունության ապահովումը, նորարարական մոդուլների մշակումը և գնահատման մեթոդների կատարելագործումը:

Ուսումնական հաստատությունները ներկայացրել են իրենց մշակած կրթական ծրագրերի նախնական փաթեթները, որոնք ներառում են

- «Կանաչ տնտեսություն և կառավարում»,
- «Բլոկչեյն և թվային արժույթներ»,
- «Կայուն քաղաքներ» ուղղությունները:

Հաշվետու տարվա ընթացքում մեկնարկել են Erasmus+ ևս երեք ծրագրեր, որտեղ ՈԱԱԿ-ն ունի առանցքային դերակատարություն:

2024 թ. տեղի են ունեցել Micro-GEAR (Միկրոորակավորումներ Հայաստանի և Վրաստանի բարձրագույն կրթական համակարգի համար), KPI4HE (Հայաստանում ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի ստեղծումը), DeSIRe (Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ փափուկ հմտությունների զարգացում) ծրագրերի մեկնարկային հանդիպումները, քննարկվել են ծրագրերի իրականացումից ակնկալվող արդյունքները:

2024 թ.-ին ծրագրերի շրջանակներում ՈԱԱԿ ներկայացուցիչները մասնակցել են միջազգային վերապատրաստումների և աշխատաժողովների, որոնք համապատասխանաբար նվիրված են եղել.

- աշխատաշուկայի պահանջներից բխող միկրո-որակավորումների մշակմանը,
- ԵՄ երկրներում միկրո-որակավորումների կիրառմանը,
- ռազմավարական պլանավորման որակի ապահովմանը,
- կրթական հաստատությունների հետազոտությունների և ռազմավարական պլանավորման ազգային ուղեցույցի (GIRSPA) նախնական տարբերակի դիտարկմանը,
- բարձրագույն կրթության ազգային KPI համակարգի մշակմանը՝ Հայաստանի ներառական, թվային և կանաչ կրթության անցումը խթանելու համար,
- կրթական ծրագրերում փափուկ հմտությունների ներդրմանը,
- փափուկ հմտությունների առցանց մոդուլների և զանգվածային բաց առցանց դասընթացների (MOOC) մշակմանը:

Ձեռքբերումներ

Վերլուծելով միջազգայնացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- Միջազգային ցանցերին անդամակցությունը բարձրացնում է ՀՀ բարձրագույն և մասնագիտական կրթական համակարգի տեսանելիությունը միջազգային մակարդակում:
- Համատեղ կրկնակի հավատարմագրումները հնարավորություն են տալիս ինստիտուցիոնալ կառավարման և կրթական ծրագրերի իրականացման գնահատում մեկ գործընթացի շրջանակներում՝ ապահովելով ՀՀ բարձրագույն կրթության միջազգային ճանաչում և շարժունության հնարավորությունների ընդլայնում:
- ՈԱԱԿ-ի միջազգային գործընկերային ցանցերի ընդլայնումը նպաստում է կրթական հաստատությունների կողմից ստացած որակավորումների միջազգային ճանաչմանը և բարելավմանը:

- ՈԱԱԿ-ի ակտիվ ներգրավվածությունը Բոլոնիայի գործընթացի աշխատանքներում ապահովում է ՀՀ-ում եվրոպական որակի ապահովման մոտեցումների տեղայնացումը:

- ՈԱԱԿ-ի կողմից կիրառվող ձևաչափերը ճանաչվում են որպես հաջողված փորձ միջազգային հարթակում, ինչը խթանում է ՀՀ կրթական համակարգի միջազգային ինտեգրումը և որակի ապահովման մեխանիզմների շարունակական զարգացումը:

- ՈԱԱԿ-ը ձեռնամուխ է եղել կրթության որակի բարձրացման նորարարական մոտեցումների ներդրմանը՝ աջակցելով անգլերենով դասավանդման մեթոդաբանության բարելավմանը, կրթության թվայնացման և ներառականության ապահովմանը, բարձրագույն կրթության կառավարման և որակի բարելավման KPI համակարգերի մշակմանը:

- ՈԱԱԿ-ը նպաստում է ՄԿՈ ոլորտի որակի ապահովման համակարգի զարգացմանը, ինչն արտահայտվում է ՀՀ-ում EQAVET չափանիշների և ՄԿՈ գնահատման մեխանիզմների փորձարկմամբ:

Հաջողության չափանիշ

ՈԱԱԿ-ի աշխատակազմի բոլոր ներկայացուցիչները կիսելու են ՈԱԱԿ-ի ապագայի նկատմամբ ընդհանուր տեսլականը: ՈԱԱԿ-ը կդառնա գրավիչ գործատու՝ ներգրավելով կրթության ոլորտի լավագույն փորձագետներին իր տարբեր նախագծերում՝ ապահովելով ճկուն կառավարման քաղաքականություն:

Փաստեր

2024 թ. ՈԱԱԿ-ը շարունակել է իրականացնել աշխատակազմի կարողությունների զարգացմանը միտված քաղաքականություն՝ հնարավարություն ընձեռելով աշխատակիցներին մասնակցելու մասնագիտական զարգացման միջոցառումներին ինչպես ՀՀ-ում, այնպես էլ միջազգային մակարդակում:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ ղեկավար կազմի ներկայացուցիչները մասնակցել են ENQA գլխավոր համաժողովին և անդամների ժողովին: Քննարկումների առանցքում են եղել հետազոտությունների որակի ապահովումը, գործակալությունների համագործակցության ուղղությունները, ինչպես նաև թվայնացումը և տվյալների հիմքով որակի ապահովման իրականացումը, որի ուղղությամբ պանելային քննարկումը վարել է ՈԱԱԿ տնօրենը: Քննարկմանը դիտարկվել է, թե ինչպես կարող են թվային տեխնոլոգիաները նպաստել որակի ապահովման համակարգերի կատարելագործմանը, ինչպես կարող է արհեստական բանականությունը կիրառվել ՈԱ համակարգում, ինչու է կարևոր ՈԱ գործընթացների թվայնացումը:

ՈԱԱԿ տնօրենը ENQA-ի հրավերով մասնակցել է Բրյուսելում տեղի ունեցած Եվրոպական համալսարանների ցանցերի որակի ապահովմանը նվիրված համաժողովին Էրազմուս+ IMINQA ծրագրի շրջանակներում:

Համաժողովի ընթացքում Եվրոպական համալսարանների ցանցերի ներկայացուցիչները, կրթության նախարարությունների և որակի ապահովման գործակալությունների անդամները քննարկել են բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում առկա առաջընթացը և ապագայի զարգացման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել համատեղ կրթական ծրագրերի իրականացման նպատակով ձևավորված Եվրոպական համալսարանների ցանցերիհավատարմագրման գործընթացներին, առկա մարտահրավերներին և հավատարմագրման արդյունքների ճանաչմանը:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի բոլոր մասնագետները՝ ըստ իրենց ոլորտային ուղղվածության, մասնակցել են ENQA-ի, INQAAHE-ի, CEENQA-ի և ETF-ի կազմակերպած աշխատաժողովներին և վեբինարներին:

Կարողությունների շարունակական բարձրացման նպատակով ՈԱԱԿ 9 աշխատակից հաշվետու տարում մասնակցել է միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վերապատրաստումներին Բելգիայում, Լատվիայում, Էստոնիայում, Վրաստանում, Իտալիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Իսպանիայում և այլուր:

Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարն ընտրվել է ENQA Առաջնորդության զարգացման ծրագրի մասնակից:
Այս ձեռքբերումը հնարավոր է դարձել Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի կրթաթոշակի շնորհիվ:

2018 թվականից մեկնարկած ENQA Առաջնորդության զարգացման ծրագիրը նախատեսված է ENQA անդամ գործակալությունների՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող և մասնագիտական մեծ պոտենցիալ ունեցող մասնագետների համար: Առաջնորդության այս ծրագիրը կազմակերպվել է Նիդեռլանդների Թվենտեի համալսարանի Բարձրագույն կրթության քաղաքականության ուսումնասիրության կենտրոնի (CHEPS) հետ համատեղ և ներառում է գործնական ուսուցում և նախագծային աշխատանքների իրականացում:

Ծրագրի շրջանակներում Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը Բուդապեշտում, Ստոկհոլմում և Քյոլնում մասնակցել է մի շարք քննարկումների և սեմինարների հետևյալ ուղղություններով.

- **բարձրագույն կրթության միտումները և զարգացումները որակի ապահովման գործակալությունների համատեքստում,**

- **կազմակերպական մշակույթն ու առաջնորդության դերը որակի ապահովման գործակալություններում,**

- **առաջնորդությունը, փոփոխությունների կառավարումը և որակի ապահովումը հատկապես ժամանակակից մարտահրավերների համատեքստում, ինչպիսիք են թվային գործիքների և արհեստական բանականության ինտեգրումը:**

Ծրագրի շրջանակներում ձևավորված թիմերն իրականացրել են ոլորտային հետազոտություններ, որոնց արդյունքներն ամփոփվել են ամփոփիչ սեմինարի ընթացքում: ՈԱԱԿ ներկայացուցիչը Նորվեգիայից, Իտալիայից, Լիտվայից և Սերբիայից ներգրավված մասնակիցների հետ ներկայացրել է **«Թվային գործիքների, այդ թվում՝ արհեստական բանականության (AI) օգտագործումը բարձրագույն կրթության և որակի արտաքին ապահովման ոլորտում»** թեմայով հետազոտության արդյունքները, որն իրականացվել է NVAO Ֆլանդրիայի գործադիր տնօրենի ղեկավարմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է իրականացնել քննարկումներ հավատարմագրման գործընթացների առանձնահատկությունների, կրթական ծրագրերի որակի ապահովման, ԳԱՑ-երի ներդրման ուղղություններով՝ ներառելով բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում մեծ փորձառություն ունեցող ներկայացուցիչներին, ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում ներգրավված համակարգողներին և փորձագետներին: ՈԱԱԿ փորձագետների հետ քննարկվել են հետազոտության իրականացման ու կրթության միջազգայնացման, ազգային և միջազգային աշխատաշուկաներին պատրաստ շրջանավարտներ թողարկելուն ուղղված հարցերը՝ փորձի փոխանակման, ոլորտային զարգացման ուղղությունների հստակեցման, նոր նախագծերի մեկնարկի նպատակով:

Ձեռքբերումներ

Վերլուծելով շահակիցների շրջանում կատարված հարցումները և ՈԱԱԿ-ի աշխատակազմի շրջանում իրականացված SWOT վերլուծությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- ՈԱԱԿ-ը շարունակաբար ընդլայնում է անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների շրջանակը՝ կարիքների վերհանման հիման վրա նախատեսելով վերապատրաստումներ և աշխատաժողովներ:

- Միջազգային ծրագրերին մասնակցությունը և Որակի ապահովման եվրոպական կառույցների հետ համագործակցությունը նպաստում են լավագույն փորձի ուսումնասիրմանը, ՈԱԱԿ-ի կողմից տվյալների վերլուծությանը և հետազոտությունների իրականացմանը:

- ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված պարբերական միջոցառումները հնարավորություն են տալիս զարգացնելու համակարգողների և փորձագետների կարողությունները՝ նպաստելով որակի արտաքին գնահատման գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Զարգացման մարտահրավերներ և զարգացման առաջիկա ուղղություններ

2024 թվականին իրականացված ծրագրերի և վերլուծությունների հիման վրա ՈԱԱԿ-ը սահմանել է մի շարք առաջնահերթ ուղղություններ, որոնք պահանջում են շարունակական զարգացում, ոլորտային ներգրավվածություն՝ ի նպաստ 2030 թ. ազգային ռազմավարության իրականացման: Նշված նախաձեռնությունները պատասխան են համակարգում պահպանվող մարտահրավերներին և միտված են որակի ապահովման կայուն մեխանիզմների ներդրմանը:

- Միջազգային համագործակցության ամրապնդում և ոլորտային չափորոշիչների կիրառություն. ՈԱԱԿ-ի անդամակցություն WFME-ին և բժշկական կրթության ոլորտային չափանիշների մշակում և հաստատում:

- Համատեղ կրկնակի հավատարմագրման գործընթացների ընդլայնում միջազգայնացման խթանման և համագործակցության շրջանակի ընդլայնման միջոցով:

- Իրավակարգավորումների արդիականացում և որակի արտաքին ապահովման վերանայումներ՝ հաշվի առնելով համակարգում իրականացվող բարեփոխումները:



Զարգացման մարտահրավերներ և զարգացման առաջիկա ուղղություններ

- Հետազոտական և վերլուծական կարողությունների ինստիտուցիոնալացում. Ուսանողական հարցման ազգային համակարգի և կրթական գործընթացների վերլուծական հարթակի ստեղծումը պահանջում է շարունակական մեթոդաբանական մշակում և տվյալների կառավարման ինստիտուցիոնալ լուծումներ:

- Կրթական ծրագրերի ներքին գնահատման խթանում:

- Ծրագրային հավատարմագրման ընդլայնում և ձևաչափերի մշակում. Նախատեսվում է շարունակել ծրագրային հավատարմագրման գործիքների և ընթացակարգերի մշակումն՝ աջակցելով ոլորտների հետ ոլորտային պահանջների և մասնագիտական չափորոշիչների համադրությամբ:



Քանապարհ դեպի որակ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ